

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2022

Սեպտեմբերի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի առաջին տասնօրյակում օդի օրական միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 1-2, տեղ-տեղ՝ 3 աստիճանով:



Տասնօրյակային ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են տասնօրյակի առաջին կեսին. Տավուշում՝ +34...+36^{0}C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +36...+41^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +31...+33^{0}C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +37···+39^{0}C, Շիրակում՝ +30..+35^{0}C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +33...+34^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +34...+36^{0}C, Լոռիում՝ +32...+36^{0}C, Գեղարքունիքում՝ +30...+32^{0}C, Արմավիրում՝ +38...+40^{0}C, Արարատում՝ +39...+40^{0}C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +33...+39^{0}C, լեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է 08...10-ին. Տավուշում +8...+10^{0}C (Դիլիջան՝ +4^{0}C), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +15...+16^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +9...+10^{0}C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +2...+4^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +11...+13^{0}C, Շիրակում՝ +5...+6^{0}C (Աշոցք՝ 0^{0}C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +6...+7^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +11^{0}C...+13^{0}C, Լոռիում՝ +3...+7^{0}C (Տաշիր՝ +1^{0}C), Գեղարքունիքում՝ +4...+8^{0}C, Արմավիրում՝ +10...+14^{0}C, Արարատում՝+12...+14^{0}C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +11...+13^{0}C, լեռնային շրջաններում՝ +2...+6^{0}C:

Հանրապետության առանձին շրջաններում սեպտեմբերի 6-8-ին դիտվել է անձրև և ամպրոպ, մնացած օրերին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:



Շիրակում տեղումների գումարային քանակը կազմել է 16-27մմ (158-374%), Լոռիում՝ 7-36մմ (171-316%), Տավուշում՝ 26-31մմ (262-286%), Արագածոտնում՝ 12-24մմ (152-350%), Աշտարակ՝ 1մմ (29%), Գեղարքունիքում՝ 13-36մմ (108-175%), Կոտայքում՝ 3-9մմ (56-136%), Արմավիրում՝ 1մմ (61%), Սյունիքում տեղումներ դիտվել է միայն Գորիսում 24մմ (187%), Արարատում, Վայոց ձորում տասնօրյակի ընթացքում տեղումներ չի դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում գրանցվել է 0...+4⁰C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ +5...+9⁰C, տեղ-տեղ՝ +11...+14⁰C:

Օդի միջին հարաբերական խոնավությունը լեռնային և նախալեռնային շրջաններում կազմել է 53-87%, հովտային շրջաններում՝ 35-50%:

Օդի նվազագույն հարաբերական խոնավությունը լեռնային և նախալեռնային շրջաններում կազմել է 21-57%, Արարատյան դաշտում՝ 16-19%:



Բուսականության սթրեսի ինդեքս



Երաշտային իրավիճակն ըստ արբանյակի

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



















Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել են պտղատուների, բանջարանոցային մշակաբույսերի բերքահավաքը, խոտհունձը, ծխախոտի տերևաքաղը, լեռնային շրջաններում՝ աշնանացան ցորենի նախացանքի և ցանքի աշխատանքները:

Առանձին լեռնային շրջաններում, որտեղ ցանքը կատարվել էր օգոստոսի վերջին հատիկը կտցել է:

Լեռնային և նախալեռնային շրջաններում դիտված տեղումները որոշ չափով բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավելով նախացանքի, ցանքի, հատիկի աճի և զարգացման պայմանները: